

ՆՇԱՆԱԿՈՐ
ԲՈԼԵՅԵՎԻԿՆԵՐԻ
ԿՑԱՆՔԸ



ԻՈՍԻՖ ՎԻՍՏԱՐԻՈՆՈՎԻԶ
ՍՏԱԼԻՆ

087.1
0-61

ՊԵՏՏՐԱԿ

Պրոլետարիատի բարեկարգության մասին

ԽՀԱՆԱԿՈՐ ԲՈԼՏԵՎԻԿՆԵՐԻ ԿՑԱՆՔԸ

087.1
Ս-61

ԱՅ

Վ. ՍՄԻՐՆՈՎԱ

ԻՌԱՖ ՎԻՍՎԱՐԻՈՒԹԻՉ ՕՏԱԼԻՆԻ

ԴՊԲՑՑԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Թարգմ.
Ավ. Ճաւդուրյան


Պ Ե Տ Հ Բ Ա Տ
ՀԱՅԵՑ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏՈՒԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ
1938

Կոմիտասի պատկերը և նախագծը

23 JUN 2009



22.7.38



ԽՈՍՀ ՎԻՄԱՐԻՇՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆ
ԴՊԲԱԿԱՆ ՏԱՐԻ ՆԵՐԸ

Քառասունութ տարի առաջ Գորիի չորսդասյան
հոգեոր ուսումնարանն եր հաճախում վոչ բարձրահասակ
մի լերեխա, պայուսակն ուսից կախած:

Դա Գորիի մի կոշկակարի և լվացարարի լերեխա
լեր: Ըստանիքի սուղ ւեկամուտի պայմաններում հոգա-
տար մայրն իր վողջ ուժերը լարած աշխատում եր, վոր
իր միակ տղան վատ չլինի մյուս լերեխաներից: Յերե-
խան միշտ հագնված եր կանոնավոր ու մաքուր: Նա
հազին ուներ կապուլտ վերարկու և լերկարածիո կոշիկ-
ներ: Թաղիքա զլխարկի տակից ուրախ նայում ելին
նրա կենդանի թուխ աչքերը, ձեռքերին հագած ուներ
մոխրագույն ձեռնոցներ, իսկ պարանոցին փաթաթած եր
լայն կարսիր շարֆը: Աւդ շարժից դեռ հեռվից ճանաշում
ելին նրան ընկերները:

— Հրեն գալիս ե մեր Սոսոն, — կանչում ելին նրանք
և վազում նրան ընդառաջ, վորովհետև դպրոցում
շատ ելին սիրում նրան: Նա այնքան կենսուրախ եր,
աշխուժ, ամրակազմ, ճարուկորեն լախտի լեր խաղում և
այնքան լավ եր կարողանում խաղընկերներ ընտրել
վոր նրա խումբը միշտ ել հաղթող եր զուրս գալիս խա-
ղի մեջ:

Բայց նա վոչ միայն դեկավար եր գասամիջոցների,
հանգստան ժամերի խաղերում, ալ և դասերի ժամա-
նակ միշտ առաջիններից եր:

Ցերբ ուսուցիչը դասարանում հարցնում ել օմլ



գիտեց, և աշակերտներից վոչ վոք չեր կարողանում պատասխանել վորեւ դժվար հարցի, բոլորը նայում ելին դեպի Սոսո Զուղաշվիլու կողմը Հենց նա յեր, վոր հավանորեն կարող եր պատասխանել. չե՞ վոր նու գիտեր այնքան հետաքրքիր բազմաթիվ բաներ, վորոնց մասին ուսուցիչը յերեք չեր պատմում:

Կառոմիր չմից կարած պայտւակում, դասագրքերի հետ միասին միշտ ել լինում եր ինչ-վոր մի ուրիշ գիրք. բոլոր ազատ ժամերին և յերեմն նույնիսկ ձանձրալի դասերին Սոսոն կարգում եր: Ինչքան գրքեր եր նա կը ըկին ու կը կին կարդացել... Դպրոցական գրադարանում շատ շուտով նրա համար և վոչ մի հետաքրքիր գիրք չեր մնացել և նա այդպիսիները վերցնում եր Արսեն Կալանդաձելից — գրախանութում:

Նա շատ լավ եր հիշում իր կարդացած բոլոր գրքերը և միշտ կարող եր շատ հետաքրքիր բաներ պատմել:

Նույնիսկ մեծահասակ մարդիկ հետաքրքրությամբ լսում ելին նրա պատմությունները և հաճախ Գորիի պատկառելի ծերունիները խնդրում ելին նրան պատմել իրենց վորեւ բան:

— Շնորհակալություն, Սոսո՛, — ասում եր նրան իր ընկեր Տիտվինաձելի քեռին, — ավելի հաճախ անցիր մեզ մոտ:

Բայց վոչ բոլոր ընկերների մոտ եր սիրով գնում Սոսոն. նա չեր սիրում հարուստների տներում լինելը նրա դասընկեր Գոգոխիան ապրում եր իր քեռու տանը, իսկ նույն տան բակում, խոհանոցի մոտի մի փոքր տնակում ապրում եր կոշկակար Վիսարիոն Զուղաշվիլին իր կնոջ ու յերեխալի հետ: Նախանձելի չեր նրանց ընակարանը. մուտքն ուղղակի բակից եր, վոչ մի աստիճան, հատակն աղուսից. Փոքրիկ լուսամուտը շատ քիչ լույս եր տալիս: Սենթակը շատ փոքրիկ եր. այնուեղ

տեղավորվում ելին միայն սեղանը, ուաբուրետները և մեկ ել խսիրով ծածկված թախտը: Գոգոխիան որպա մեջ մի քանի անգամ ցած եր իջնում այդ նեղլիկ սենթակը, բայց շատ հազվագեղ եր հաջողվում նրան Սոսո Զուղաշվիլուն տանել իր հետ վերև, իրենց մեծ սենթակը:

Փոքրիկ Գորիում դպրոցներ քիչ կային և Գորիի հարուստ յերեխաներն ել ատիպված սովորում ելին չքավորների յերեխաների հետ և յուրաքանչյուր դասարանում կային յերկու խումբ, յերկու կուսակցություն: Սոսոն, իհարկե, յերկրորդների խմբումն եր — աղքատների ու դժբախտների յերեխաների հետ. այդպես եր անվանում նրանց արհամարհական ձեռվ ուսուցիչ իլուրիձեն:

Բայց այնուամենայնիվ ուսուցիչներն ստիպված ելին նրան ճանաչել վորպես առաջին աշակերտ: Սոսոն հրաշալի հիշողություն ուներ և մլուս յերեխաներից ավելի շատ գիտեր:

Հաճախ ուսուցիչները հետապնդում ելին նրան. ինչպես ե, վոր այդ փոքրիկը յերեվակայում ե իրեն՝ թե ինքն ավելի գիտի, քան իր ուսուցիչը: Յեկ ահա նրան գրատախտակի մոտ ելին կանչում հերթից դուրս, հարցնում ելին ամբողջ դասընթացից, տալիս ելին խորամանկու խրթին հարցեր՝ կտրելու դիտավորությամբ:

Բայց Սոսո Զուղաշվիլին չեր վախենում այդ անըսպասելի հարցերից: Նա հանգիստ կերպով պատասխանում եր, և յեթե նա ասում եր ինչ-վոր բան, ապա միանգաման վստահ եր, վոր այդ այդպես ե, հակառակ դեպքում չեր ասի:

Մեկ անգամ ուսուցիչ իլուրիձեն, հենց նա, վորը ծաղքում եր չքավորների յերեխաներին, հարցուց նրան.

— Քանի վերստ ե Պետերբուրգից մինչև Պետերզոֆ: Սոսոն պատասխանեց:

Բայց, ինչպես յերեւում եր, ուսուցիչն ինքը հաստատ

չգիտեր ալն, ինչ վոր հարցնում եր, կամ ուղղակի ցանկանում եր կտրել աշակերտին:

— Դու ալպես ես մտածում, — նենդամտորեն նորից հարց տվեց նա:

— Յես ալդ գիտեմ, — պատասխանեց Սոսոն:

— Դու սխալվում ես, — ասաց ուսուցիչը:

— Վհչ, ալդ դուք եք սխալվում, — պատասխանեց Սոսոն:

— Ի՞նչպես ես դու համարձակվում վիճել ինձ հետ, — բարկացավ ուսուցիչը:

— Յես զիտես, վոր յես ճշմարիտ եմ, — պնդեց իր ասածը Սոսոն:

Ուսուցիչն սկսեց բղավել և վիրավորանքներ հասցնել:

Բայց յերեխան չեր զիջում: Նա կանգնել եր դասասեղանի մոտ ձգված և համարձակ նալում եր ուսուցիչն. Նրա աչքերը լախացել ու փալում ելին:

— Յես ձիշտ եմ, — կրկնեց նա:

Իսկիֆ Զուղաշվիլին ավելի շատ գիտեր, բայց յերեք չեր զոռողանում և յերեխաներին չեր ցուց տալիս իր առավելությունները: Նա լավ ընկեր եր և միշտ ոգնության եր հասնում թույլերին: Ոգնում եր նրանց լուծելու խնդիրները, նրանց հետ աշխարհազրական քարտեզներ եր նկարում: Իսկիֆը լավ նկարիչ եր, թեև ալդ ժամանակ դպրոցում նկարչություն չելին սովորեցնում:

Մի անգամ նրանց դասարանն ընդունվեց Մենդելիալից մեկ տղա: Նա վրացերեն վատ եր խոսում, իսկ տղաներն սկսեցին ծաղրել նրան՝ բառերի վոչ ձիշտ արտասանության համար: Սոսոն շատ հասարակ ու մըտերմական լեզանակով մոտեցավ նրան ու ասաց.

— Յես ցանկանում եմ մենդելելերեն սովորել. արի

դու ինձ մենդելելերեն սովորեցրու, իսկ դու ինձնից վրացերեն կսովորես:

Սոսոն ալդ ժամանակ 11 տարեկան եր:

Տասներեք տարեկան հասակում իսուիֆն ոգնում եր արդեն դպրոցական ընկերներին ավելի լուրջ հարցեր պարզաբանելու:

Մեկ անգամ անառալին արձակուրդների ժամանակ իր ընկեր Գլուրջիձեզի հետ նա գնաց զբոսանքի: Աննկատելի կերպով նրանք դուրս յեկան քաղաքից, անցան Քուրի կամուրջը, յերկաթուղագիծը և քաղաքից դուրս կանաչ մարդագետնի. վրա պառկեցին: Նրանց շուրջը հապատ վեր ելին ցցվել լեռները, կապուտակ յերկնքում փալլում եր ամրան վառ արել: Իր շրջապատով հիացած Գլուրջիձեն խոսք բաց արեց աստծո մասին: Իսուիֆը լսեց լուրջ կերպով, լսությամբ, ապա ասաց մեղմ ձախով:

— Գիտես, մեզ խարում են, աստված չկա....

Ընկերն ալլալվեց. յերեք վոչ վոքից նա ալդպիսի խոսքեր չեր լսել:

— Սոսոն, ալդ ինչ ես ասում:

— Յես քեզ մի գիրք կտամ կարդալու, վորտեղից դու կիմանաս, վոր աշխարհն ու կյանքն ալլ կերպ են կառուցված և այն բոլորը, ինչ վոր պատմում են աստծո մասին, սուս ե, — ասաց իսուիֆը:

— Ալդ ինչ գիրք ե, — հարցրեց Գլուրջիձեն:

— Դարվին: Անպալման կարդա, — ասաց իսուիֆը:

1894 թվին, 15 տարեկան հասակում իսուիֆ Զուղաշվիլին ավարտեց Գորիի դպրոցը: Նա հատկապես աշքի ընկավ ավարտական քննություններին: Նրա ատեսատում միան հինգեր ելին: Նա նույնիսկ գովասանագիր ստացավ. մի յերեսվիթ, վոր ալդ դպրոցի կյանքում տեսնված չեր: Գովասանագիր հոգեոր դպրոցում

տալիս ելին միայն քահանաների լերեխաներին — իսկ նրա
հալը մի հասարակ կոշկակար եր:

Պատ. խմբադիր՝ Աբ Մովսիսյան
Տել. խմբադիր՝ Ան. Գասպարյան
Արքադրիչ՝ Վ. Ավագյան

Անցավ համարևա կես դար:

Վրացի փոքրիկ լերեխան առեց ու դարձավ հսկա,
հզոր լերկրի մի առաջնորդ, ամբողջ աշխարհի կոմունիստ-
ների առաջնորդը, բոլոր լերկրների ու ժողովուրդների
աշխատավորության սիրելի ու մեծ առաջնորդը:

Աշխարհում չկա մի անկրուն, վորտեղ հիացմունքով,
հուլսով, շնորհակալությամբ, բարձրաձայն կամ շշուկով
չկրկնվի նրա անունը — ՍՏԱԼԻՆ:



2975
38

Դրամի լիազոր կ—4731. Հրատ. № 4439.

Պատվեր 101. Տիրաժ. 10000.

Թուղթ 62×94. Տպագր. 3/4 մամ.

Մեկ մամուլում 24950 նիշ. Հեղինակ. 1/4 մամ.

Հանձնված և արտադրության 21 հունվարի 1938 թ.

Ստուգադրամ և տպագրության 4 մարտի 1938 թ.

Գինը 60 կազ.

Պատմամի 1 տպագրան, Յերևան, Խենինի փող. 63.

«Ազգային գրադարան



NL0139456

ԳԻՆԸ 60 Կ.

222

16. 843

В. СМИРНОВА
ИОСИФ ВИССАРИОНОВИЧ
СТАЛИН
школьные годы
Гав Арм. ССР, Ереван, 1938